

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՐՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր՝ աշխատուժ, միգրացիա, արտագաղթ, ներգաղթ

Արտագաղթը Հայաստանի պատմության անբաժանելի մասն է: Դա համընդհանուր և ծանր բնույթ ընդունեց, երբ Հայաստանն անվերադարձ կորցրեց իր անկախ պետականությունը և բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Արևմտյան Հայաստանից հայերի արտագաղթը զանգվածային բնույթ ընդունեց 1915 թ.-ի ցեղասպանության հետևանքով:¹

Հայաստանից արտագաղթն ունի դարերի պատմություն: Դեռևս 12-13-րդ դարերում հայերն արտագաղթեցին Ղրիմ, Ուկրաինա և Լեհաստան, որի հետևանքով ձևավորվեց Արևելյան Եվրոպայի հայկական գաղթօջախը: 13-15-րդ դարերում սկիզբ առավ հայերի արտագաղթը դեպի Ռուսաստան, իսկ 16-րդ դարում տեղի ունեցավ հայերի բռնի արտագաղթը Պարսկաստան: Հայկական ջարդերի և եղեռնի հետևանքով 1896-1924թթ. հայերը բռնի արտագաղթի ենթարկվեցին պատմական Արևմտյան Հայաստանից դեպի Ռուսաստան, Սիրիա, Եգիպտոս, Լիբանան, Ֆրանսիա, Հունաստան, ԱՄՆ և հարավամերիկյան երկրներ, ձևավորելով և ընդլայնելով հայկական սփյուռքը:

Հակառակ ուղղությամբ գաղթի հոսքեր սկսեցին առաջանալ 1946-1948թթ., երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ հայրենադարձության հետ կապված արձանագրվեց հայերի բավականին ակտիվ ներգաղթ ԱՄՆ-ից, Մերձավոր Արևելքից, Պարսկաստանից և Եգիպտոսից, իսկ 1970-ական թթ. վերջին ներգաղթը մեծ չափերի հասավ Լիբանանից և Արևելյան Երուսաղեմից: Մինչև 1970-ական թթ. Հայաստանի բնակչությունը աճեց նաև ԽՍՀՄ հանրապետություններից, և հատկապես Վրաստանից ու Ադրբեջանից ներգաղթածների հաշվին:²

1918-թ.-ից մինչև 1980-ական թթ. միգրացիոն հոսքերը Հայաստանում ունեին դրական մնացորդ և այս տարիներին երկիր էր ներգաղթում տարեկան միջին հաշվով 2-4 հազ.մարդ: Սակայն 1980-ական թթ.սկզբից մինչև 1988թ. իրավիճակը կտրուկ փոխվեց (Աղյուսակ 1):

¹Նիկողայոս Ադոնց, Երկեր, հատ. Զ, Երևան, 2012, էջ 32

² Pogosyan G. Migration processes in Armenia, Y. 2002, p.25

Աղյուսակ 1. Միգրացիոն գործընթացները հայկական ԽՍՀ-ում 1980-1987թթ.³ (հազ.մարդ)

Տարիներ	Էմիգրացիա	Իմիգրացիա	Մնացորդ
1980	47.0	38.6	-8.4
1981	44.5	38.2	-6.3
1982	47.3	39.7	-7.6
1983	50.2	40.9	-9.3
1984	56.2	45.3	-10.9
1985	66.2	50.8	-15.4
1986	66.6	54.9	-11.7
1987	70.7	60.3	-10.4

1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբին սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի կտրուկ փոփոխություններ, որոնք պայմանավորված էին մի շարք գործոններով, մասնավորապես էթնիկական բախումներով, շրջափակմամբ, աղետալի երկրաշարժով, ԽՍՀՄ-ի փլուզմամբ, Ղարաբաղյան հակամարտությամբ: Եթե 1980-ական թթ. Հայաստանում էմիգրացիան ուներ առավելապես տնտեսական պատճառներ, ապա նույն տասնամյակի վերջին սկիզբ առած միգրացիոն հոսքերը պայմանավորված էին վերը նշված տնտեսական, սոցիալական և քաղաքական պատճառներով:

Կարող ենք արձանագրել, որ այս շրջանում ներքին միգրացիան առանձնանում էր հետևյալ բնութագրերով.

- 1988թ. աղետալի երկրաշարժից հետո շուրջ 200 հազ. աղետյալներ (հիմնականում կանայք և երեխաներ) տեղափոխվեցին ԽՍՀՄ այլ հանրապետություններ, որոնցից 150 հազ.-ը վերադարձան Հայաստան, իսկ 50 հազ.-ը չվերադարձան:

- Արցախյան հիմնախնդրով պայմանավորված՝ Ադրբեջանի հետ զինված բախման հետևանքով Արարատի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից հեռացավ շուրջ 75 հազ. մարդ, որոնք սկզբում տեղափոխվեցին Հայաստանի այլ շրջաններ, իսկ հետագայում ընդգրկվեցին արտաքին միգրացիոն հոսքերում:

Փաստորեն, այդ ժամանակահատվածում Հայաստանի ներքին միգրացիայի գործընթացներում ընդգրկվեցին շուրջ 200 հազ. մարդ, որոնցից կեսը փոխեցին իրենց բնակության վայրը երկրի ներսում:

1980-ական թթ. վերջին և 1990-ականների սկզբին Հայաստանի արտաքին միգրացիան բնութագրվում էր հետևյալ գործոններով.

³ Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը

• փախստականների հոսքով, երբ փախստականների և հարկադրաբար տեղահանվածների ընդհանուր թիվը կազմեց 420 հազ.մարդ, որից միայն Ադրբեյջանից գաղթածները 360 հազ. էր: Սակայն, ըստ պաշտոնական տվյալների, երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակի հետևանքով, նրանց 21%-ը հետագայում հեռացավ երկրից, իսկ վերջիններիս թվից մոտ 65 հազ. մարդ դարձան մշտական արտագաղթողներ: Փախստականների նման էմիգրացիան դեռևս շարունակվում է և բացի տնտեսական պատճառներից այն պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետությունն անկարող է լուծելու հասարակությանը նրանց ինտեգրվելու խնդիրը:

• Էկոլոգիական էմիգրացիան, որը հիմնականում ծնունդ առավ երկրաշարժի գոտուց: Ադրբեյջանի գոտուց շուրջ 200 հազ. մարդ դուրս բերվեցին Հայաստանից և միայն 150 հազ.-ը վերադարձավ հայրենիք, այն էլ մինչև 1992-1994 թթ., երբ նրանց շրջանում բարձրացավ արտագաղթի նոր ալիք, ձևավորելով զանգվածային արտագաղթի նոր հոսքեր:⁴

• Հասարակական-քաղաքական էմիգրացիան (1991-1992 թթ.): Նախկին ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունն արգելակող գործոն էր հանդիսանում էմիգրացիոն գործընթացների զարգացման համար, սակայն վերջինիս փլուզումից հետո առաջացան զգալի էմիգրացիոն հոսքեր: Դրանցում ընդգրկվեց բնակչության այն մասը, որը նախորդ տարիներին մշտապես ձգտել էր էմիգրացիայի և չէր կարողացել երկրից արտագաղթել: Այդ մարդկանց թվին էին պատկանում բարձր որակավորում ունեցող մասնագետները, ռուսալեզու բնակիչները, արտերկրում ձեռնարկատիրությամբ զբաղվելու ձգտում և հնարավորություն ունեցող անձինք, նախկին հասարակարգին չհարմարվող քաղաքացիները և այլն: Այս կարճ ժամանակահատվածում Հայաստանից հեռացավ շուրջ 300 հազ.մարդ, իսկ էմիգրացիոն բացասական մնացորդը կազմեց մոտ 100 հազ.մարդ:⁵ Նմանօրինակ էմիգրացիոն հոսքերը միանշանակ կարելի է բնութագրել որպես «ուղեղների արտահոսք», քանի որ մարդկային և ֆիզիկական կապիտալի հոսքը լուրջ հարված հասցրեց հանրապետության գիտական, մշակութային, սոցիալ-քաղաքական և տնտեսական ոլորտների հետագա զարգացմանը:

• Սոցիալ-տնտեսական էմիգրացիան (1993-2001թթ.)` 2 փուլով.

- բնակչության զանգվածային էմիգրացիայի փուլ, որն ընդգրկում է մինչև 1995թ. ընկած ժամանակաշրջանը: Այս փուլում էմիգրացիոն հոսքերը զանգվածային բնույթ ունեին և մեծապես պայմանավորված էին նախկին համակարգի փլուզմամբ, բնակչության կենսամակարդակի շեշտակի անկմամբ, կենցաղային պայմանների վատթարացմամբ: Համաձայն մասնագետների գնահատականների, ընդամենը 2.5 տարվա ընթացքում Հայաստանից արտագաղթեց ավելի քան 800 հազ. մարդ, որոնցից ռեէմիգրացվել է միայն 400

⁴ Բնակչության էմիգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում, էջ 10:

⁵ Բնակչության էմիգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում, էջ 5:

հազ.-ը: 1993թ. միգրացիոն բացասական մնացորդը արդեն կազմել է 200 հազ. մարդ, 1994 թ.՝ 150 հազ. մարդ, իսկ 1995թ.՝ 60 հազ. մարդ:⁶

- Միգրացիոն ակտիվության նվազեցման և կայունացման փուլ, որն ընդգրկում է 1995-1999թթ: Այս ժամանակահատվածում էմիգրացիան պայմանավորված էր այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք էին էմիգրանտ աշխատողների վերամիավորումը և աշխատանքային էմիգրացիայի նոր հոսքերի ձևավորումը: Հարկ է նշել, որ այս տարիներին արձանագրվեց էմիգրացիոն ակտիվության անկում, որը մի կողմից, արդյունք էր էմիգրացիոն ներուժի նվազման, իսկ մյուս կողմից՝ երկրի տնտեսական վիճակի որոշակի կայունացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման առանձին միտումների դրսևորման: Այդուհանդերձ, այս տարիներին հանրապետությունից արտագաղթեց մոտ 350 հազ. մարդ, որից ռեէմիգրացվեց միայն 200 հազ.-ը: Այս փուլի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ այս ժամանակաշրջանում գերակշռեց մշտական էմիգրացիան:

Հաջորդ փուլն ընդգրկում է 1999-2003թթ.: Արդեն 1999թ., երբ ճգնաժամի արդյունքներն արտացոլվեցին Հայաստանի տնտեսության վրա, նկատվեց էմիգրացիայի կտրուկ աճ: Այնուամենայնիվ, 2000-2001թթ., միաժամանակ տեղի է ունեցել միգրացիոն մնացորդի դանդաղ նվազում, իսկ 2002թ. միգրացիայի բացասական մնացորդը վերջին տասնամյակում հասել է իր նվազագույն արժեքին՝ 2720 մարդու:

Աղյուսակ 2. Միգրացիայի մնացորդը 1992-2000թթ..⁷(հազ.մարդ)

Տարիներ	Մնացորդը (+/-)
1992	-230.0
1993	-203.0
1994	-150.0
1995	-60.0
1996	-50.0
1997	-40.0
1998	-45.0
1999	-77.58
2000	-72.23
2001	-60.39
2002	-2.72

⁶ Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում, էջ 14:

⁷ Armenia tourism agency. At <http://www.ata.am>

ՀՀ-ում միգրացիոն սալդոն 2000-2003 թթ.-ին եղել է բացասական, իսկ 2004-2006 թթ.-ին՝ դրական, ինչը վկայում է այն մասին, որ ՀՀ ժամանումների ընդհանուր թիվը գերազանցել է ՀՀ-ից մեկնողների ընդհանուր թվին: Այսպես 2007-2014 թթ.-ին միգրացիայի հաշվեմնացորդը եղել է բացասական և 2014 թ.-ին կազմել է 41.7 հազ.մարդ: Ընդ որում տարեց տարի ավելացել է ինչպես ՀՀ-ից մեկնողների, այնպես էլ ՀՀ ժամանողների թիվը: ՀՀ-ից մեկնողների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 110.7%-ով, իսկ ՀՀ ժամանողների թիվը 110.4%-ով: (Աղյուսակ 3)

Աղյուսակ 3. ՀՀ սահմանափակումների ծավալներն 2000-2014 թթ.⁸ (հազ.մարդ)

Տարեթիվը	Ժամանումներ	Մեկնումներ	Սալդո
2000	399.7	457.2	-57.5
2001	508.2	568.6	-60.4
2002	590.7	593.4	-2.7
2003	618.3	628.5	-10.2
2004	739.9	737.8	2.1
2005	845.8	833.3	12.5
2006	983.7	962.0	21.8
2007	1293.6	1296.8	-3.2
2008	1397.2	1420.2	-23.1
2009	1432.0	1457.0	-25.0
2010	1754.2	1800.9	-46.7
2011	1945.1	1988.9	-43.8
2012	2191.8	2234.6	-42.8
2013	2476.3	2507.5	-31.2
2014	2734.6	2776.3	-41.7

ՀՀ 6129 տնային տնտեսությունների 2007-2008 թթ. մեր հետազոտության արդյունքներով, 15 տարիների ընթացքում ՀՀ-ից մեկնել է տնային տնտեսության անդամների 21.6%–ը: Տնային տնտեսությունների այն հարցին, թե ո՞րն է արտերկիր մեկնելու Ձեր պատճառը, արտացոլված է ստորև բերված աղյուսակում: Ինչպես նկատում ենք միայն աշխատանքը չէ, որ պատճառ է դառնում արտագաղթի, միգրացիայի: Արտագաղթի լուրջ պատճառներ են. լավ վարձատրվող աշխատանքը, ըստ մասնագիտության աշխատելը, սոցիալ-քաղաքական անկայուն վիճակը, անվստահությունն ապագայի նկատմամբ, կրթությունը և ընտանիքի մյուս անդամներին միանալու ձգտումը:

⁸ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայք՝ http://smsmta.am/?menu_id=17

Աղյուսակ 4. Արտերկիր մեկնելու պատճառները 2007-2008 թթ..⁹

	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոս
Պարզապես աշխատանք գտնելու	762	22.6
Ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը	78	2.3
Լավ վարձատրվող աշխատանք գտնելու	814	24.1
Միանալու ընտանիքի մյուս անդամներին	691	20.5
Սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակը ՀՀ-ում	101	3.0
Հայաստանում անվստահությունն ապագայի նկատմամբ	49	1.5
Կրթություն	144	4.3
Այլ	733	21.7
Ընդամենը	3372	100

Սույն ուսումնասիրության արդյունքներով հանրապետության տնային տնտեսությունների շուրջ 20%-ն արտերկրում ունի ընտանիքի անդամներ և նրանց միանալը դարձել է նոր միգրացիոն հոսքերի ածանցյալ պատճառ: Ավելին, եթե արտերկրում գտնվողները չվերադառնան և նրանց թիվն ու բաժինը շարունակ աճի, ապա հեռանկարում կդառնա նոր՝ ավելի մեծ միգրացիոն հոսքերի պատճառ՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Աղյուսակ 5. Մշտական բնակության վայրի փոփոխության պատճառները Հայաստանում¹⁰

	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոսը
Աշխատանքի բացակայությունը	304	38.5
Ոչ բավարար վարձատրությունը	33	4.1
Սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգը	33	4.1
Հիմնական կրթական օջախներից հեռու գտնվելը	145	18.3
Գյուղմթերքի իրացման խնդիրը	5	0.7
Դժվար է պատասխանել	72	9.1
Այլ պատճառներ	199	25.1
Ընդամենը	791	100

⁹ Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 47

¹⁰ Նույն տեղը, էջ 55

Մշտական բնակության վայրը փոխելու հիմնական պատճառը դարձյալ աշխատանքի բացակայությունն է և ոչ բավարար վարձատրությունը: Դրանց գումարվում է կրթական օջախների հեռու գտնվելը և սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը: Այժմ դիտարկենք և առանձնացնենք արտագաղթի և մասնավորապես միգրացիայի հիմնական պատճառները և հետևանքները.

- գործազրկությունը, ցածր աշխատավարձը և աղքատությունը,
- հարստության ու եկամուտների բեռնացման, սոցիալական անարդարության ու կոռուպցիայի էլ ավելի խորացումը,
- օրենքով ապրելու վստահ համակարգի բացակայությունը,
- հայ գյուղի և հայկական ընտանիքի ավանդույթների էլ ավելի խաթարումը, գյուղացու տնտեսական վիճակի վատթարացումը,
- Հայաստանում ապագայի նկատմամբ անվստահությունը,
- ժողովրդագրական բացասական միտումների խորացումը:

Այժմ նշենք միգրացիայի հիմնական բացասական հետևանքները.

• ժողովրդագրական բացասական զարգացումները հանգեցրել են նրան, որ 1988-2001թթ. Հայաստանից արտագաղթել է 1-1.1 մլն. մարդ:¹¹ Ծնելիությունը նվազեց 2.2, իսկ ամուսնությունների թիվը` 2 անգամ:¹²

- “ուղեղների արտահոսքի” արդյունքում նվազում է գործարար ներուժը,
- ներքին միգրացիոն տեղաշարժերի զարգացման հետևանքով սահմանամերձ և բարձր լեռնային շրջանների բնակչության թվաքանակի կրճատում և երևանում բնակչության խտացում:

Հարկ է առանձնացնել միգրացիայի հետևյալ դրական հետևանքները.

• աշխատունակ բնակչության արտագաղթը ինչ որ չափով բարելավում է երկրի աշխատուժի շուկայի վիճակը, կրճատում է գործազրկության մակարդակը, մասնակիորեն թեթևացնում է զբաղվածության սուր հիմնախնդիրը, թուլացնում է տվյալ երկրի սոցիալական լարվածությունը, կրճատում է պետության կողմից կատարվող սոցիալական ծախսերը:

• աշխատող միգրանտները զգալի դրական միջոցներ են փոխանցում հայրենիքում գտնվող իրենց հարազատներին: Այդ միջոցների (տրանսֆերտների) հաշվին բարձրանում է բնակչության եկամուտների մակարդակը և դրական ազդեցություն ունենում երկրի ֆինանսական վիճակի, հատկապես վճարային հաշվեկշռի բարելավման վրա: Տրանսֆերտների անընդհատ հոսքը հայրենք դիտվում է որպես փոխարկելի արտարժույթի ստացման կարևոր աղբյուր:

• Միգրանտներն արտասահմանում ստանում են անվճար կրթություն, ձեռք են բերում աշխատանքային փորձ և գիտելիքներ, ծանոթանում են ԳՏԱ-ի նորագույն նվաճումներին և հայրենքի վերադառնալիս ունենում են բարձր

¹¹ Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց: ՄԱԿ ԶԾ 2009, էջ 51

¹² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ.: Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱԿԾ, Երևան, 2003, էջ 150

որակավորում, իրենց հետ բերում են նոր գիտելիքներ և արտադրական բարձր մշակույթ, նյութական արժեքներ և կուտակված կապիտալ:

Արտագաղթի կանխման հիմնական ուղիներ կարող են լինել.

- տնտեսական աճի տեմպերի արագացումը, գործազրկության կրճատումը, աշխատավարձի բարձրացումը և աղքատության հաղթահարումը,
- բնակչության հարստության և եկամուտների ահռելի բևեռացման կրճատումը, արդարացի բաշխման հաստատումը,
- բնակչության բարոյահոգեբանական դժգոհության և լարվածության հաղթահարումը, ապագայի նկատմամբ վստահության հաստատումը,
- հարկային, մաքսային և վարկային հարաբերությունների լծակներով մենաշնորհների սահմանափակումը և շուկայական ազատ ու արդար մրցակցային օրենսդրական դաշտով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումների և նոր աշխատատեղերի խթանումը,
- պետական մակարդակով աշխատանքային միգրացիայի այնպիսի մոդելի ստեղծումը և կիրառումը, որը կապահովի միգրանտների վերադարձը Չայաստան,
- երկրի ժողովրդագրական սպառնալիքների հաղթահարումը,
- հատուկ ֆոնդերով, բարձր աշխատավարձով «ուղեղների արտահոսքի» կանխումը,
- սահմանամերձ գյուղերից արտագաղթի կանխումը և ներգաղթի խթանումը,
- երկրում համընդհանուր խնայողական հոգեբանության արմատավորումը:

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Միգրացիայի վրա ազդող գործոնները, պատճառները և հետևանքները ՀՀ-ում
Բանալի բառեր՝ աշխատուժ, միգրացիա, արտագաղթ, ներգաղթ

Հոդվածում քննարկվում են միգրացիայի վրա ազդող գործոնները, միգրացիայի հիմնական պատճառներն ու հետևանքները ՀՀ-ում և առաջադրվում միգրացիայի կանխարգելման հիմնական ուղիները: Մշտական բնակության վայրը փոխելու հիմնական պատճառը դարձյալ աշխատանքի բացակայությունն է և ոչ բավարար վարձատրությունը: Դրանց գումարվում է կրթական օջախների հեռու գտնվելը և սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը: Այժմ դիտարկենք և առանձնացնենք արտագաղթի և մասնավորապես միգրացիայի հիմնական պատճառները և հետևանքները:

Анна АРУТЮНЯН

Факторы влияющие на миграции, причины и последствия миграции в РА

Ключевые слова: рабочая сила, миграция, эмиграция, иммиграция, сальдо миграции.

В статье рассматриваются факторы влияющие на миграции, основные причины и последствия миграции в Армении и предлагаются основные пути предотвращения миграции. В частности, анализируются современные тенденции, вызывающие трудовую миграцию, особенно квалифицированной рабочей силы, “утечку мозгов”, при этом отдельно оцениваются потоки разных частей миграции – эмиграции и иммиграции, и как результат этих потоков – положительное или отрицательное сальдо, которое, в свою очередь, воздействует на экономическое развитие страны.

Anna HARUTYUNYAN

The influencing factors on migration, the reasons and consequences of migration in Armenia

Key words – labour, migration, emigration, immigration, migration balance

The article examines the factors influencing migration, root causes and consequences of migration in Armenia and proposes ways to prevent migration. In particular, modern trends, causing labor migration, particularly of skilled manpower, "brain drain", while separately estimated flows of different parts of the migration - emigration and immigration, and as a result of these flows - positive or negative balance, which in turn , affects the economic development of the country.\